

22219

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՇԵ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱԾԷՐ:

Գ Ի Յ

ԳԻՒՂԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԱ

Հարգելի

Հ. Ա. Մանյան

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
1919 թ.

15 JAN 2010

5 FEB 2010

330.394
P-55

Պրոէկտարներ բոլոր երկրների միջոցով

1417

1417

Գ Բ Յ

ԳԻՒՂԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԱ

1000

ՊԵՏԵՐՈՒՐԳ
1919 թ.



14457-57

1917 թ. հոկտեմբերի 25-ին կոմմունիստների կատարած չեղաշրջումը ղեկավարներին հող ու ազատութիւն աւեց, աշխնքն ապահովեց նոցա մշակութեան համար անհրաժեշտ հողալին տարածութիւններով, աղաւեց նոցա ոչ միայն թաղաւորական լծից, այլ և բոլոր հարուստների և բուրժուազիայի ստրկութիւնից:

Խորհուրդների երրորդ համառուսական ժողովը քնդունեց հողի համայնացման օրէնքը, որի շնորհիւ բոլոր հողերը ձանաչուեցան ամբողջ ժողովրդի սեպհականութիւն: Հողի սոցիալիզացիան կամ համայնացումը ամենից առաջ վերացրեց հողի մասնաւոր սեպհականութիւնը, վերացրեց հողը գնելու և վաճառելու իրաւունքը: Ս.յ օրէնքի հրատարակման օրից սկսած ամենքը զրրկւեցան որեւէ նպատակով հողը գնելու և վաճառելու իրաւունքից, ուստի և ներկայումս հնարաւոր է միայն օգտագործել հողը, բայց ոչ աիրել նորան իբրեւ մի սեպհական իրի: Հողն օգտագործելու իրաւունք ունին նոքա միայն, ով ցանկութիւն և հնարաւորութիւն ունի անձնական աշխատանքով՝ առանց բանւորների և ծառայող-

ների մշակել այն: Այդ նորա համար է, որ առանձին անհատների ձեռքը չ'ընկնեն մեծ հողաբաժիններ:

Բոլոր հողերը, ում էլ որ պատկանելիս լինէին դոքա, օգտագործութեան համար անցած են բոլոր աշխատաւորներին առանց փրկանքի, նմանապէս բոլոր կալւածների ամբողջ շնչաւոր և անշունչ զոյքը (տաւարն և գործիքները) իրենց ամեն տեսակի զիւղատնտեսական ձեռնարկութիւններով, որպիսիք են՝ կաթնարանները, պանրի գործարանները, ցամաքատունները, ջրաղացները, ձիաբուծարաններն և այլն:

Պետութիւնը բոլոր երկրագործութեամբ զբաղւողներին պէտք է ապահովագրէ ծերութեան, հիւանդութեան, հաշմանդամութեան դէպքերի համար, ինչպէս որ արւում է քաղաքի կամ գործարանների բանուորների նկատմամբ: Երկրագործների տնտեսութիւնն ևս պէտք է ապահովագրուի հրդէհից, կոտորածից, անբերութիւնից, կարկուտից և այլ աղէտներից:

Հատիկների, հացի և զիւղատնտեսական մեքենաների առևտուրը դառնում է պետական մոնոպոլիա, այսինքն՝ դոցա առևտուրը միայն պետութեան է պատկանում և ոչ առանձին առևտրականներին:

Գիւղատնտեսական կարիքների՝ այսինքն մշակման համար երկրագործներին հարկաւոր եղած բոլոր հողերը բաժանւում են նոցա ըստ պահանջի և աշխատանքի. այդ նշանակում է, որ չի կարելի տալ աւելի պակաս հող քան այն, որով հնարաւոր է կերակրել, և չի կարելի տալ աւելի քան այն, որը կարող է իւրաքանչիւր դք ինքն իւր աշխատանքով մշակել: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ իւրաքանչիւր վայրում հողամասերի

կամ հողաբաժինների առանձին չափ կարող է լինել, նախելով երկրի պտղաբերութեան, տնտեսութեան սիստէմի, քաղաքների մերձաւորութեան և այլ պայմաններին:

Սրանք են հողի համայնացման օրէնքի հիմնական սկզբունքները, որոնց կարելի է աւելացնել մի խիստ կարեւոր սկզբունք ևս, այն է՝ որ Խորհրդային Կառավարութիւնը գերադասում է ոչ թէ անհատական, այլ կոմմունիստական, խմբական ընկերութիւնը կամ կօօպերատիւ տնտեսութիւնը:

Գիւղացիների համար համայնացման օրէնքի մէջ ամենից կարեւորն այն է, որ նոցա հողն առաջուանից աւելանում է. բնականաբար նոցա համար պակաս նշանակութիւնն չունի նաև այն, որ հողն ըստ կարելւոյն հաւասարաչափ բաժանւի աշխատաւորների մէջ: Այնուամենայնիւ այս ամենն առաջնակարգ նշանակութիւն ունի, երբ խնդրի վրայ թուղցիկ հայեացք ենք ձգում միայն:

Իսկապէս ամենից էականն այն չէ, որ որքան կարելի է շատ հող լինի, այլ այն, որ հողն ըստ կարելւոյն շատ արդիւնք տալ: Նամանաւանդ կարեւոր է այդ ներկայումս, համաշխարհային կամ առնւաղն համակրօպական սովի ժամանակ: Ամենից կարեւորն է նմանապէս ոչ թէ հողի ըստ կարելւոյն հաւասարաչափ բաժանումը երկրագործների մէջ, այլ այն, որ կարելւոյն չափ շատ երկրագործ զբաղւել կարողանայ հողի մշակմամբ: Կարեւոր է դա մանաւանդ մեր օրերում, երբ բոլոր երկրներում պակասել են տաւարն ու զիւղատնտեսական գործիքները:

Խնչ հնար կայ, որ կարելւոյն չափ շատ հաց ստացւի և ըստ կարելւոյն չափ երկրագործը աշխատել կարողանայ երկրի մշակմամբ:

* * *

Ենթադրենք, որ բոլոր հողերն ամենաարդար կերպով բաժանւած են բոլոր երկրագործներին ըստ պահանջի և աշխատանքի: Հողի հաւասար բաշխումը, սակայն, ամենեւին չի կարող երաշխաւորել, որ հողամասեր ստացողները հնարաւորութիւն կունենան անմիջապէս ձեռնարկել հողի մշակման, որովհետեւ, բացի հողից պէտք են տաւար, գործիքներ, սերմ, դրամ, իսկ որ գլխաւորն է՝ աշխատող ձեռք: Եթէ պատերազմը մի կողմից ողորկեց մեր գիւղերը թղթաղրամներով, միաժամանակ նա ամապացրեց գիւղերը, ոչնչացնելով աշխատող ձեռները, տաւարն ու գործիքները: Ո՛չ մի կառավարութիւն և ո՛չ մի պետութիւն, որքան էլ ցանկանայ, անկարող է մատակարարել երկրագործին հարկաւոր տաւարն ու գործիքները և այդ անկարողութիւնը կարող է տարիներ քաշել:

Այս պայմաններում, անկախ այն հանգամանքից, թէ հողամասն ինչ սկզբունքով է ստացւած — ըստ աշխատանքի՝ թէ ըստ պահանջի, այդ հողի մշակմանը ձեռնարկել կարող են և արդէն իսկ ձեռնարկել են նոքա միայն, որոնք ունին պատրաստի գործիքներ, տաւար և սերմ, կամ գոնէ փող այդ ամենը ձեռք բերելու համար: մի կողմն ենք թողնում աշխատող ձեռները:

Պարզ է, որ դոքա ո՛չ թէ գիւղի չքաւորներն են, այլ գիւղացիներից աւելի ունեւորները, կեղեքիչ-

ները: Ըստ ինքեան հասկանալի է, որ դոքա հետեւանքն անհրաժեշտօրէն պէտք է լինի այն, որ չունեւորների հողամասերը կիտլին աւելի հարուստների ձեռքում, չքաւորները պէտք է պարտքի մէջ խրուին և փոխ տունեն կամ սերմ, կամ դրամ և կամ շնչաւոր և անշունչ գոյք:

Այդ ստրկացումից խուսափել կարելի է մի ճանապարհով միայն, և դա՝ գիւղական կոմմունաներ կամ համայնքներ կազմակերպելու ճանապարհն է: Դրանում ամենից առաջ շահադրդուած են չքաւորները, որոնք իրենց, գլխաւորապէս պատերազմից քայքայւած, տրտեսութեան մէջ զանազան պակասութիւններ ունին: Ամենից շատ և ամենից հեշտ գիւղական կոմմունաներ կարելի է կազմակերպել գրաււած կալուածքներում, մանաւանդ, եթէ այնտեղ կան շնչաւոր և անշունչ գոյք, սերմ և տնտեսութեան համար հարկաւոր այլ իրեր: Շատ Խորհուրդներ իրենց փեղերում թույլ չէին տալիս, որ գիւղացիները բաժանեն կալուածքը, այլ ամբողջութեամբ մշակում էին այդ կալուածքները չքաւորների վարձովի աշխատանքի միջոցով, և կամ տալիս էին այն ընկերութիւններին և կօօպերատիւներին: Յետագայում այդ տեսակ կալուածքներում պէտք է կազմակերպել կոմմունաներ կամ համայնական տնտեսութիւններ, ուր բոլորն աշխատեն միասին, մի «ընդհանուր կաթսայի» համար, ինչպէս որ աշխատում են գիւղացիների համերաշխ ընտանիքներում: Կոմմունական տնտեսութիւններն աւելի ձեռնտու են ո՛չ միայն գիւղական փոքրիկ տնտեսութիւնների հետ համեմատած, այլ նոյն իսկ խո-

շոր կալուածքների հետ բաղդատելով: Այդ կարելի է տեսնել հետևալ մի քանի օրինակներից:

Վերցնենք մի կալուածք 1000 դէսեատին տարածութեամբ և ենթադրենք, որ ըստ աշխատանքի կամ պահանջի բաժանման չափը 10 դէսեատին է ընդունւած: Այդպիսով այդ կալուածքը կարելի կլինի բաժանել 100 տանտիրոջ մէջ, որոնք, սակայն, այն դէպքում միայն կարող կլինին սկսել ստացած հողի մշակումը, եթէ բոլորն էլ ունենան գործիքներ, տաւար, սերմ և տնտեսութեան համար այլ անհրաժեշտ իրեր: Բոլոր 100 հողամասերն առանձին-առանձին լաւ մշակելու համար պէտք է առնուազն 100 աշխատանքի ընդունակ երկրագործ, նոյնչափ էլ գութան, ձի, սալլ, ցաքան, դերանդի և այլն: Իսկ եթէ 1000 դէսիատինը որոշւէր մշակել որպէս ամբողջական մէկ կալուածք, այն դէպքում կարելի կլինէր բաւականաճալ գութանների, ձիերի, սալլերի և այլ գոյքերի աւելի պակաս քանակութեամբ, նմանապէս աւելի պակաս թւով մարդիկ՝ պէտք է կլինէին: Բացի այդ բաւականին տնտեսած կլինէինք նաև հողը, որովհետև 1000 դէսեատինը որպէս մի ամբողջութիւն մշակելու դէպքում՝ աւելի քիչ բաժին կ'լինէր սահմանագծերի և ճանապարհների համար, քանի որ 100 հողամասի փոխարէն կլինէր ընդամենը մէկ հողամաս, բաժանուած մի քանի վարելահողի, նայելով երկրագործութեան սխտէմին (եռահերկ, քառահերկ, վեցհերկեան, բազմահերկ և այլ ցանքսափոխութիւններ):

Մեծ կալուածքներում սովորական երկրագործական գործիքները — արօրը, ցաքանը, գութանը և այլն, կարելի է փոխարինել աւելի կատարելագործուած և ար-

դիւնաւոր գործիքներով, օրինակ, կրկնախոփ կամ եռախոփ գութանով, շրջանածև կամ ոլորապտոյտ ցաքանով, շոգեղութանով և այլն: Նմանապէս մեծ կալուածքներում միայն կարելի է սարքել և շահով գործադրել կալսելու շոգեմեքենաներ և տրակտորներ (որոնցով կարելի է վարել, ցանել, հնծել, կալսել), սովորական սերմանիչներ, զանազան տեսակի ձեռնարօրներ, հողը փափկացնելու գործիքներ, հնձելու, կարտօֆիլ փորելու մեքենաներ, թեղը քամելու, հատիկներ ու որոմներ ջոկելու մեքենաներ և այլն: Նմանապէս մեծ տնտեսութիւնները հնարաւորութիւն են տալիս աւելի մեծ չափով և աւելի ձեռնտու եղանակով օգտագործել հողի պարարտացումը. այլ և էլէքտրականութիւն բանեցնել զիշերային շտապ աշխատանքների ժամանակ լուսաւորելու համար և, երկրի մէջ հօսանք թողնելով, բոյսերի աճումն արագացնելու համար: Հաւասար կերպով մեծ տնտեսութիւններում միայն աւելի չարմարութեամբ կարելի է, օրինակ, ցամաքացնել ճահիճները, ստորերկրեայ անջրդիացում կատարել, փոսերն ամրացնել, պատուարներ շինել, ոռոգել, ջրել և այլն:

Ներկայումս այս ամենը զիւղացու 'համար ոչ նորութիւն է և ոչ էլ անիրագործելի երևակայութիւն, ինչ որ 20—30 տարի առաջ կարելի էր համարել, մանաւանդ այն նահանգներում, ուր լաւ կազմակերպուած խոշոր տնտեսութիւններ են եղել:

Վերջինների թւում Ռուսաստանի հարաւում և արեւմտեան նահանգներում եղել են խոշոր տնտեսութիւններ, որոնք ունեցել են իրենց առանձին ճանապարհները,

այսինքն փոքր, դէպի կայարաններն ու նաւահանգիստները տանող երկաթուղային ճիւղեր:

Գիւղական կոմմունիստական տնտեսութիւններն ևս կարող են ունենալ նոյն տեսակի ճանապարհներ, որովհետեւ դրանք ահագին նշանակութիւն ունին ամեն տեսակի փոխադրութեան արագութեան և արժանութեան համար: Մանաւանդ կարեւոր է այդ ներկայումս, երբ, պատերազմի պատճառով, ամբողջ Եւրոպայում ձիերի և առհասարակ աշխատող անասունների ահագին պակասութիւն է նկատուում:

Գիւղատնտեսութիւնը, մանաւանդ արեւմտեան երկրներում և Ամերիկայում, երկրագործութեան սիստեմների նկատմամբ, հողի պարարտացման և մեքենաների գործադրութեան նկատմամբ այնպիսի խոշոր քայլեր է արել, որ բոլոր կատարելագործութիւնները թւելու համար պէտք է լինէր մի ամբողջ դիրք զբիւր: Այստեղ բաւական ենք համարում ասել, որ բոլոր կատարելութիւնները կամ խնայում են մարդկային աշխատանքը և կամ հողի բերրիութիւնը: Երկու հանգամանքն էլ խիստ կարեւոր է ներկայումս, երբ պատերազմի պատճառով գիւղացիների և աշխատաւորների միջից միլիոնաւոր բանւորներ են պակսել, և ամենուրեք գիւղատնտեսական ամեն տեսակ մեքենաների սուր կարիք է դադարում: Աշխատող ձեռների և մթերքների պակասութիւնը պահանջում է կենդանի մնացած և աշխատանքի ընդունակներից բարձրացնել աշխատանքի արդիւնաբերութիւնն ու հողի բերրիութիւնը, որին հասնելու ամենալաւ միջոցն է գիւղական կոմմունաների կազմակերպութիւնը:

* * *

Գիւղական կոմմունաները հողի մեծ խնայողութիւն կարող են անել, բացի սահմանադրերն ու դաշտային աւելորդ ճանապարհները ոչնչացնելուց, որի մասին վերեն էր ասւած: Վերցնենք մեր օրինակը. եթէ 1000 դէսեաւեր բաժանենք 100 տանտիրոջ մէջ, վերջիններս պէտք է ունենան 100 աղարակ, 100 տուն, 100 բանջարանոց, 100 շտեմարան: 100 շէնք անասունների համար և այլն: Իսկ եթէ միւսնոյն տարածութեամբ հողի վրայ սարքւած լինի մի կոմմունիստական կամ համայնական տնտեսութիւն, այն դէպքում կոմմունան, թէկուզ բազկացած լինի հարիւր ընտանիքից, կարող է բաւականաչափ տալ կամ քսան մեծ տներով իրենց կից բոլոր յարմարութիւններով, ընդհանուր խոհանոցներով, ճաշարաններով, և դուցէ միայն մէկ մեծ շտեմարանով հատիկների համար: Դրանով հնարաւոր կլինի բանջարանոցներ ու այգիներ ունենալ ոչ թէ իւրաքանչիւր տան առաջ, ինչպէս որ ներկայումս է գիւղերում, այլ աւելի յարմար վայրերում — գետերի ափին, հարթավայրերում, գոռիվայրերում, քամուց ազատ, արեօս տեղերում և այլն, նայելով թէ ինչ բանջարեղէն է կամ մրգեղէն: Հողի տնտեսութիւնը մեծ նշանակութիւն ունի, որովհետեւ, զբաւումից ու սեպհականութեան վերացումից յետոյ, հողի նոր յաղիւր չկայ այլևս, մանաւանդ որ սոցիալիզմը մերժում է ամեն տեսակի կեղեքիչ պատերազմ օտարների հօդը թալանելու նպատակով: Միաժամանակ հողի համայնացումը դարձնելով վերջինս աւելի հանրամատչելի՝ քան մասնաւոր սեպհականութեան ժամանակն է եղել, կարող է մեծացնել հողի պահանջը, մանաւանդ բազաքային կեանքից յոգնած բազաքի բնակ-

չութեան համար: Որքան շատ լինի կոմմունաների թիւը
գիւղերում, այնքան աւելի հող կ'ինայւի և այնքան ա-
ւելի մարդ հողի վրայ տեղ կունենայ:

Որքան խիտ լինի գիւղերի բնակչութիւնը՝ այնքան
աւելի հեշտ է զանազան ձեռնարկութիւնների ու հիմ-
նարկութիւնների կազմակերպութիւնը. օրինակ, երկրա-
գործական գործիքների նորոգութիւնը, գիւղական բեր-
քերի մշակումը, որպիսիք են՝ պանրի, իւղի գործարան-
ներ, չաղացներ, կօնսէրվի, կալբասի, մակարօնի գործա-
րաններ, փուռեր և այլն: Այս ամենի կազմակերպու-
թիւնը գիւղական կոմմունաներում մեծ նշանակութիւն
ունի ամբողջ պետութեան համար, որովհետեւ գիւղա-
տնտեսական մշակուած արդիւնքների տեղափոխութիւնն
ու նմանապէս պահպանութիւնն աւելի է ժամ ու լար-
մար է, քան անմշակ զբոսութեամբ: Բացի այդ՝ Գիւղա-
տնտեսական բերքերի մշակումը իր տեղում կարող է
խիստ նպաստել, որ այդ բերքերն աւելի հաւասար բաշ-
խուին երկրի բնակչութեան քան ներկայումս, երբ քա-
ղաքները խիստ լիքն են, իսկ գիւղերը՝ դատարկ: Երբ
ամբողջ երկիրը գիւղերում ու քաղաքներում լցուի կոմ-
մունաներով, այն ժամանակ բնակչութիւնը հեշտութեամբ
կարող է հերթով փոփոխել զբաղմունքներն ու աշխա-
տանքները քաղաքներում ու գիւղերում:

Մինչև այժմ երկրագործները խիստ լարած աշ-
խատում են սովորաբար ամառը, մանաւանդ հնծի ժա-
մանակ, երբ օրական բնդամենը 3—5 ժամ են քնում:
Իսկ ձմեռը, եթէ կողմնակի աշխատանք չունին, գիւղի
բնակիչները դբադուում են տնային որևէ աշխատանքով,
մանաւանդ եթէ կալը վերջացրել են աշնանը կամ ձմրան

սկիզբը: Եթէ գիւղի ու քաղաքի կոմմունաները պաշ-
մանաւորուին փոխադարձաբար օգնել իրար և փոխանա-
կել իրենց աշխատանքները, ապա գիւղերում ևս քաղաք-
ների պէս կարելի է սահմանել օրական ու ժամուայ
աշխատանք՝ երկու-երեք հերթակալութեամբ: Դրա հա-
մար հնձի տաք աշխատանքի ժամանակ քաղաքի բնակ-
չութիւնը պէտք է գիւղատնտեսական աշխատանքներին
կալի, իսկ մնացած ժամանակ, բնագիւղառակը, պէտք է
քաղաք անցնի, և կամ իւր տեղում, տեղական զանազան
ձեռնարկութիւնների մէջ արդիւնաբերական գործունէու-
թեամբ զբաղւի: Ինքն ըստ ինքեան հատկանալի է, որ
աշխատաւորների այս տեսակ համաչափ բաժանումը
հնարաւոր կլինի այն ժամանակ միայն, երբ ամբողջ եր-
կիրը կպատէ կոմմունաների ցանցը թէ՛ գիւղերում, և
թէ՛ քաղաքներում, և կդառնայ մի տնտեսութիւն բաղ-
մաթիւ բաժանմունքներով:

Գիւղական կոմմունան գիւղական չքաւորութեան
համար միակ միջոցն է կարիքից փրկելու և աւելի
հարուստ համադիւղողիների կախումից ազատելու:
Գիւղական կոմմունան միայն կարող է չքաւորին ռաի
կանգնեցնել և մանաւանդ ներկայումս, երբ հացն ու
ապրանքը պակասել են, իսկ թանկութիւնն անընդհատ
աճում է: Այս ժամանակ կարող է արդեօք չքաւորը
ձեռք բերել ձի, զուլթան, երկաթէ ցաքան, զերանդի և
այլն: Զուռնեւորների ահադին բաղմութեան համար դա
անկարելի է, և այդ բանում նոցանից ոչ մէկին չի կա-
րող օգնել ոչ մի երկրի ոչ մի կառավարութիւն: Այդ
անհնարաւորութիւնը բացատրւում է նրանով, որ չքա-
ւորների թիւը խիստ մեծ է և խիստ երկար է աւել

պատերազմը, որով և անհնարին է շուտով լրացնել ապ-
րանքների բազմատեսակ պակասը, նույն թուրք և զիւ-
ղատնտեսական շնչաւոր և անշունչ գոյքը: Իսկ առան-
ձին զիւղական կոմմունաներին օգնելն անհամեմատ աւելի
հեշտ է, քան առանձին չունեւորների, որովհետեւ կոմմու-
նաների թիւը չի կարող այնքան շատ լինել, որքան
չունեւորների թիւն է:

*
* *

Կոմմունաներ կազմակերպելու գործում ամենից ա-
ռաջ շահագրգռւած են չքաւորները, որովհետեւ նոքա են
խեղճ վիճակի մէջ և նոքա ունին տնտեսական բազմա-
տեսակ պակասութիւններ: Նարուստները կոմմունաների
պէտք չունին, որովհետեւ նոքա ամեն ինչ ունին և նոցա
հարկաւոր են չքաւորներ միայն, որ իրենց համար աշ-
խատեն: Քանի որ կոմմունաները կարող են չքաւորներին
աղքատութիւնից փրկել, բնական է, որ հարուստները
քաղաքներում և գիւղերում ամեն միջոց գործ դնեն,
որպէսզի կոմմունաներ չլինին: Այդ նպատակով է, որ
նոքա առանձին եռանդով աշխատում են, որպէսզի բան-
ւորական-գիւղացիական կառավարութիւն չլինի, որն
ամեն միջոց ձեռք է առնում, որպէսզի գիւղերում կա-
րելուօյն չափ շատ լինի երկրագործական կոմմունաների
թիւը: Ներկայումս երկրագործութեան կոմիտսարիատը
հրատարակել է արդէն հրահանգներ ու ձեռնարկներ
կոմմունաներ ստեղծելու համար:

Կոմմունաների նպատակների ու ծրագրերի մասին
հրահանգներում ասւած է.

«Կոմմունաների վերջնական նպատակն է գիւղական

տնտեսութեան բարեփոխութիւնը ընկերվարական սկզբ-
բունքներով»: Դրա համար կոմունաները պէտք է
ծգտեն. — դարդացնել խոշոր հանրական տնտեսութիւն,
ընդունելով այն որպէս աւելի ձեռնտու. հաստատել
քաղաքների և գիւղերի միջև ապրանքների կանոնաւոր
փոխանակութիւն. բարձրացնել աշխատանքի արդիւնա-
ւորութիւնը մշակման բազմազերկ եղանակ մտցնելով և
արհեստական պարարտացման ու մեքենաների միջոցով.
դարդացնել արդիւնաբերութեան կողմնակի ճիւղերը, որ-
պիսիք են՝ անասնապահութիւնը, թռչնաբուծութիւնը,
պանրագործութիւնը և այլն. միացնել, մի համաչափ
տնտեսութեան վերածել արդիւնաբերութիւնն ու երկրա-
գործութիւնը: Ապա հրահանգի մէջ ասուած է, որ կոմ-
մունայի անդամ զրուողը հրաժարւում է անձնական
սեպհականութիւնից և իւր ամբողջ կարողութիւնը յանձ-
նում է ի սեպհականութիւն կոմմունայի, մի «ընդհա-
նուր կաթսայի»: Կոմմունաները իրենց անդամների հա-
մար հանրակացարաններ են հիմնում, օգնում են մի-
մեանց և իրար հետ միանում են՝ ամբողջ երկիրը կա-
րօտեալների կազմակերպութիւնների ցանցով պատելու
համար, գիւղերում և քաղաքներում սօցիալիստական
թագաւորութիւն հիմնելու նպատակով: «Կոմմունան
աշխատաւորների կամաւոր դաշն է միասին ապրելու
համար, որի հիմքն է կազմում հաւասարութիւնն ու
խոշոր գիւղատնտեսութեան հանրական կառավարու-
թիւնը»: Կոմմունաների մէջ վաստակած բոլոր մթերք-
ները մտնում են «ընդհանուր կաթսայի մէջ», հաշւի են
առնւում և մնացորդը յանձնւում է խորհուրդների մթե-

րանոցները, որովհետեւ Ռուսաստանում հացի համար դոյութիւն ունի արդէն պետական մոնոպոլիա:

Կոմմունաների մէջ ամեն ինչ ամենքին է պատկանում, ուստի և այնտեղ ամենքը կարող են հաւասար աղքատ կամ հարուստ լինել: Կոմմունաներում բոլորն աշխատում են, և իւրաքանչիւրից պահանջւում է իւր ընդունակութեան և կարողութեան չափով, և իւրաքանչիւր ոք ստանում է համաձայն իւր կարիքի և պահանջի, այսինքն հաւասար չափով, որովհետեւ բոլորն էլ հաւասար են և զտնւում են կեանքի և աշխատանքի միեւնոյն պայմաններում: Այս վիճակի հասնելն կարեւոր է ոչ միայն կոմմունաների և նրա անդամների համար, այլ և ամբողջ պետութեան ու նրա բոլոր քաղաքացիների համար, բացի բուրժուազիայից, որի շահն է կազմում հէնց անհաւասարութիւնը, որպէսզի փոքրամասնութիւնը երջանիկ կեանք ունենայ, իսկ մեծամասնութիւնը տանջւի: Յետագայում, երբ ուրիշ ելք չի մնայ, հաւասարութեան ուրախ կլինի նաեւ բուրժուազիան, բայց մինչ այդ, մինչև բոլոր մեծ երկրներում չքաւորների զիկտատուրայի հաստատուելը, չքաւորը միայն ուրախ կլինի, որ բոլորն և իւրաքանչիւրը հաւասար վիճակի մէջ լինին: Նիւթական բարիքների՝ այսինքն մթերքների, ապրանքների, վառելիքի, բնակարանների և այլն հաւասարութիւնը, բոլոր պահանջներին բաւարարելու միջոցների հաւասարութիւնը կազմում է չքաւորների շահն և օգուտը, և հարուստների՝ կորուստն ու վնասը. ուստի և չունեւորները միայն կարող են կոմմունաներ հիմնել զիւղերում և քաղաքներում:

9001
է-5-45m1

Մեր ժամանակում խիստ էական նշանակութիւն ունի քաղաքի և դիւղի միջև ապրանքների փոխանակութիւնը կանոնաւորելու հորցը: Մինչև այժմս այդ փոխանակութիւնը կատարւում է վաճառականների միջոցով, որոնք պատերազմի ընթացքում կատարելագործուել են ամենասանձարժակ սպէկուլեացիայի մէջ, Մի ժամանակ նրանց դէմ կռիւ էին մղում կօօպերատիւները, որոնցով խիստ պատած են Ռուսաստանի քաղաքներն ու դիւղերը, բայց կօօպերատիւներն էլ անհրաժեշտօրէն սկսեցին շահի և օգուտի չետեից ընկնել: Ոչ մի կօօպերատիւ չի կարող կառավարւել առանց զրամի, իսկ զրամը ստիպւում է շահի չետեից ընկնել, մանաւանդ երբ ապրանքների գներն անդադար աճում են: Բացի այդ, կօօպերատիւներն անդամավճար են պահանջում և շահագործւում են անդամներին որոշ շահով իրենց բաժնէզնի և խանութից գնած ապրանքների համեմատ, ուստի և զօրա չեն կարող յաղթել թանկութիւնն ու միացնել չունեւորներին: Մի խօսքով կօօպերատիւները անպայման ձեռնտու են միայն տնտես գեղջուկներին և ոչ քաղաքների ու դիւղերի չքաւորների համար: Նեւեաբար կօօպերատիւները չեն կարող կանոնաւորել ապրանքի փոխանակութիւնը հաւասարութեան հիմունքներով, այլ միայն օգուտի տեսակով, թէև աւելի մեղմ չափով քան վաճառականները: Ապրանքի փոխանակութիւն հաւասարութեան հիմունքներով կարող են ստեղծել միայն քաղաքների և դիւղերի կոմմունաները:

Ամեն մի քաղաք պէտք է կոմմունայ դառնայ բաղմաթիւ բաժանմունքներով, ինչպիսիք են զանազան



Ֆարրիկաներ, գործարաններ, արհեստանոցներ և այլ ձեռնարկութիւններ և հիմնարկութիւններ: Ամեն մի վիճակ կոմմունայ պէտք է դառնայ իր բաղմաթիւ բաժանմունքներով, որպիսիք են — զիւղաքաղաքների և զիւղերի կոմմունաներ, ֆարրիկաներ, գործարաններ և արհեստանոցներ, որոնք զիւղաքաղաքներում տեղ - տեղ ալժմ էլ են հանդիպում: Այս տեսակի կոմմունաներ գաւառների, նահանգների և վիճակների մէջ միանալով՝ կարող են ապրանքի փոխանակութիւն անել քաղաքային կոմմունաների հետ: Ապրանքի այս տեսակ փոխանակութիւնը կարող է վերացնել դրամի կարիքը, որովհետեւ զիւղացիք՝ զիւղական կոմմունաների անդամները, իրենց աշխատանքի արդիւնքի փոխարէն կարող են ստանալ քաղաքացիների՝ քաղաքի կոմմունաների անդամների այն ապրանքները, որոնք վերջիններս կարտադրեն և հիմա էլ արտադրում են իրենց գործարաններում և արհեստանոցներում:

Տնտեսութեան այս տեսակ կազմակերպութեան զէպքում դրամն ամենեւին պէտք չի լինի, մանաւանդ մեր օրերում, երբ նորա արժէքն աշխատանքի բոլոր մասերում ընկնում է: Մարդիկ խիստ սխալւում են կարծելով՝ թէ որքան շատ փող լինի ձեռներին, այնքան լաւ ապրուստ կունենան: Մեր օրերում բոլորովին դրա հակառակն է — որքան շատ է փողը՝ այնքան աւելի բարձր են ապրանքների գները և այնքան աւելի աղքատ են մարդիկ: Դրամի արժէքն ամենուրեք օրէցօր ընկնում է, ուստի և մնում է, որ բոլորովին վերացնեն նորա գործածութիւնը. բայց այդ հրաւոր է այն ժամանակ

միայն, երբ Ռուսաստանի բոլոր քաղաքներն ու զիւղերը կծածկուեն մեծ ու փոքր կոմմունաների ցանցով: Եւ կոմմունաները հնարաւորութիւն կտան փոխանակել ապրանքն ապրանքով, մթերքը՝ մթերքով, և ամեն մի աշխատանք վարձատրել ոչ թէ փողով, այլ բնական բերքով, մթերքներով ու ապրանքներով:



„ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՄՄՈՒՆԱՅ“-Ի ԳՐԱԴԱՐԱՆ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ՝

1. Վատին. — Խնչ բան է կոմունան: Գինն է 60 Կ.
2. Քիյ. — Գիւղական կոմունա: Գինն է 70 Կ.

Տպագրւում է՝

1. Քիյ. — Գիւղական համայնքից զէպի սոցիալիստական կոմունա:

Պտտրասաւում են տպագրութեան համար՝

1. Կառլցկի. — Սոցիալիզմի պատմութիւնը
2. Բարեօֆ. — Հաւասարութիւն պահանջողների վարդապետութիւնը:
3. Ռոմէն-Ռոլան. — Ժողովրդական թատրոն:

ՀՀ Ազգային գրադարան



NL0196546

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԵՆՌՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՍՍԱՐԻԱՏԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՍԻՆՈՒՄ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ՝

1. Ռուս. Սոց. Ֆեդ. Խորհուրդների Հանրապետութեան Սահմանադրութիւնը:
2. Ն. Լենին. — Նամակ Ամերիկեան Բանւորներին: Գինն է 1 ր.
3. Վ. Փրիչէ. — Պրոլետարական պոէզիան: Գինն է 2 ր.
4. Ներհակ. — Դէպքերը Բաբուռն (Հայ Յեղ. Գաշնակցութիւնը և Բագրի Խորհրդային Իշխանութիւնը): Գինն է 75 կոպ.
5. Չիչերին. — Բրեստից լիտու (Զեկուցում Խորհուրդների 5-րդ համագումարին): Գինն է 1 ր.
6. Ն. Լենին. — Կարլ Մարքս (Համառօտ. կենսագրութիւնը և մարքսիզմի շարադրութիւնը): Գ. 1 ր. 50 կ.
7. Ներհակ. — Ռուսաստանի Յեղափոխութիւնը և պրոլետարիատի տակտիկան: Գինն է 1 ր.
8. [redacted] — I. Կոմմունիստական Կուսակցութիւնը Գերմանիայում, II. Կարլ Լիբկեխտը (Լիբկեխտի նկարով): Գինն է 1 ր.
9. Խորհրդային Կառավարութեան նոտան Վիլսոնին: Գինն է 75 կոպ.
10. Մ. Պաւլովիչ (Վելյաման). — Ստիան և իր զերը Համաշխարհային պատերազմի մէջ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՄԻՍՍԱՐԻԱՏԻ ՊԵՏԵՐՈՒՐԻ ՔԱԺԱՆՍՈՒՆՔԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Վատին. — Խնչ բան է կոմմունան: Գինն է 60 կ.
12. Քիյ. — Դիւղական կոմմունա: Գինն է 70 կ.